ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 02 >> <<օգոստոս >> 2014 թ N 67

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ << ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՆՈՒՆԴ >> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման N1 հավելվածի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը իրականացնելու նպատակով հաստատել միջոցառումների ժամանակացույցը /համաձայն հավելվածի/:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է.ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի
Օգոստոսի 2-ի N 67 կարգադրության

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը իրականացնելու նպատակով հատկացված միջոցառումների ժամանակացույցը

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Կատարման ժամկետը	Պատասխանատու կատարող
1	Ճշտել <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրում ընդգրկվող երեխաների թիվը	02.08.2014թ	Ա.Գաբրիելյան
2	Ծրագրի շրջանակներում նախատեսված սննդամթերքի մատակարարման համար գնման փաստաթղթերի ընթացակարգի մշակում	06.08.2014թ	Ռ.Հայրապետյան
3	Դպրոցի տնօրենների և հաշվապահների սեմինար խորհրդակցության կազմակերպում	08.08.2014թ	Ա. Հովհաննիսյան
4	Այցելություններ կազմակերպում դպրոցներ <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի համար նախատեսված տարածքների կամ ճաշարանների վիճակի և սանիտարահիգիենիկ պայմանների ուսումնասիրության նպատակով	15.08.2014թ	Մ.Հարությունյան Է. Մանուկյան Վ. Գրիգորյան
5	Կատարված աշխատանքների ամփոփում և ներկայացում մարզպետին	25.08.2014թ	Մ.Հարությունյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Կ.ՍԱՀԱԿՅԱՆ